

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/11»**

ք. Երևան

«28» 09 2020թ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հիդրո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշիվին համապատասխան

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները. եթե

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշիվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4) Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում)։

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 8 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի գինը կազմում է 645 976 003 (վեց հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար երեք) ՀՀ դրամ, որից 107 662 667 (մեկ հարյուր յոթ միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր վաթսույոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝

5.1.1 Պայմանագրի գնից մինչև 25%-ի չափով Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում է կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող Խամաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌՈՒԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը. եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի. առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային եռաշիփքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ)

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա. Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը Կապալառուն պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ Սույն պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի չորսից տուժանքի՝ ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.15 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար:



ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Հիդրո» ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150008211381335
ՀՎՀՀ 09804085
Տնօրեն՝



(Handwritten signatures)

արդանյան

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՏԻՆ ԳՅՈՒԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ


| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքները | Աշխատանքների կատարման ժամկետը** |
|---|---|-----------------------------------|
| 1 | Ընդհանուր նախապատրաստական և հողային աշխատանքներ | ոչ ուշ քան 80-րդ օրացուցային օրը |
| 2 | Միաձույլ ե/բ աշխատանքներ (0.00 նիշից ցածր և բարձր) | ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օրը |
| 3 | Պատերի, միջնորմների շարվածք, երեսպատման աշխատանքներ | ոչ ուշ քան 350-րդ օրացուցային օրը |
| 4 | Տանիքային աշխատանքներ | ոչ ուշ քան 290-րդ օրացուցային օրը |
| 5 | Բացվածքների լրացում | ոչ ուշ քան 260-րդ օրացուցային օրը |
| 6 | Հատակներ, առաստաղներ, հարդարում | ոչ ուշ քան 420-րդ օրացուցային օրը |
| 7 | Ներքին և արտաքին ինժեներական կոմունիկացիաներ | ոչ ուշ քան 410-րդ օրացուցային օրը |
| 8 | Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ | ոչ ուշ քան 420-րդ օրացուցային օրը |
| 9 | Օժանդակ օբյեկտների կառուցում | ոչ ուշ քան 330-րդ օրացուցային օրը |
| | Շինարարության կազմակերպման Նախագծով նախատեսված մոդուլային տիպի դպրոցի կառուցման աշխատանքների ամբողջ ծավալի կատարման ժամկետը կազմում է | 420 օրացուցային օր |

* Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ

**Աշխատանքների կատարման ժամկետը հաշվարկվում է ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող (պայմանագիրն) համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերի առկայության դեպքում


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
 ք Երևան, Հանրապետության հրապարակ,
 կառավարական տուն 3
 ՀՀ Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՎՀ 02565827
 Գլխավոր քարտուղար



ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Հիդրո» ՍՊԸ
 ք Սիսիան, Շիրվանզադե 5
 ՀՀ Հայրիզնեսրանկ >> ՓԲԸ
 Հ/Հ 1150008211381335
 ՀՎՀՀ 09804085
 Տնօրեն՝



Վարդանյան

Handwritten signature

Handwritten signature

Հավելված N 4
 « 28 » 09 2020թ կերված
 N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրուս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Կատարված աշխատանքների | | | | Վճարման ենթադաս գումարը /հազար դրամ. | Վճարման ժամկետը |
|---|-----------|---|--|---------|--|---------|--------------------------------------|-----------------|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Աշխատանքը հանձնեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն անուն
 Կ Տ

Աշխատանքը ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն անուն
 Կ Տ

Հավելված N 4 1
« 28 » 09 2020թ կնքված
N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/11» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները

| Աշխատանքի | | |
|-----------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն անուն

ստորագրություն

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

Աղյուսակ N 1

ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների համար

| Հ/Հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ | Նախագծողի կոմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/ |
|-----|---|---|
| 1 | 2 | 5 |
| 1 | Շենքի կրող կոնստրուկցիաների շահագործման հաշվարկային ժամկետ | 50 |
| | Հարդարման աշխատանքներ | |
| 2 | Բազալտե հանքաքամքակից ջերմամեկուսիչ նյութեր | 50 |
| | Տանիք | |
| 3 | Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի) | 40 |
| | Սառը ջրի մատակարարման ներքին ցանց | |
| 4 | Ցնցուղի ծորակ-խառնիչ | 1 |
| 5 | Լվացարանի ծորակ-խառնիչ | 1 |
| 6 | Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչ | 1 |
| 7 | Ջրառման ծորակ Փ15մմ | 1 |
| | Էլեկտրալուսավորում | |
| 8 | Առաստաղի LED լուսատու 35վտ, 3350Lm, IP40, 4000K | 1 |
| 9 | Առաստաղի LED լուսատու 35վտ, 3350Lm, IP40, 4000K, վթարային, ներսարքված մարտկոցով | 1 |
| 10 | Առաստաղի LED լուսատու 33վտ, 2800Lm, IP20, 4000K դասասենյակների համար | 1 |
| 11 | Առաստաղի LED լուսատու 28վտ, 3100Lm, IP20, 4000K գրատախակը լուսավորելու համար | 1 |
| 12 | Առաստաղին ամրացվող LED լուսատու 27վտ, 2250Lm, IP20, 4000K | 1 |
| 13 | Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 27վտ, 2250Lm, IP20, 4000K | 1 |
| 14 | Առաստաղի LED լուսատու, պաշտպանված մետաղական ցանցով 34վտ, 3700Lm, IP20, 4000K | 1 |
| 15 | Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 34վտ, 3700Lm, IP20, 4000K | 1 |
| 16 | Լուսատու հերմետիկ LED 31վտ, 3500Lm, IP65, 5000K | 1 |
| 17 | Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 31վտ, 3500Lm, IP65, 5000K | 1 |
| 18 | Լուսատու դահիճի համար LED 33վտ, 3600Lm, IP40, 4000K | 1 |
| 19 | Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 33վտ, 3600Lm, IP40, 4000K | 1 |

| | | |
|--------------------------------|---|---|
| 20 | Պատի LED լուսատու 18վտ, 1310Lm, IP65, 4000K | 1 |
| 21 | Լուսատու LED, ներսարքվող կախովի առաստաղի մեջ 15վտ, 650Lm, IP65, 4000K | 1 |
| 22 | Լուսատու ազդանանշանային, վթարային 4վտ IP40 ԵԼՔ | 1 |
| Բարեկարգման աշխատանքներ | | |
| 23 | Ասֆալտը ետոնե ծածկույթի շահագործման երաշխիքային ժամկետ | 5 |

Աղյուսակ N 2

«Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների համար»

| Հ/Հ | Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր/ | Չափ. միավ | Քանակ | Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ՝ տրված արտադրողի կամ մատակարար-ներկայացուցչի կողմից /տարի/ |
|----------------------|---|-----------|-------|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Ամբարձիչ | | | | |
| 1 | Պտուտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք | հատ | 1 | 1 |
| Օդափոխություն | | | | |
| 2 | TROX, 3600/32 Ներմուծման-արտածման սարք, ԼՆ =36խմ/ժամ, Լա = 3200 խմ/ժամ, որը լրակազմված է՝ 1, օդազտիչ մուտքի և ելքի վրա 2, օդատաքացուցիչ ՕԴ= 27.6կվտ 3 օդի պտտվող ռեկուպերատոր 4. օդամղիչ ներմուծման ԼՆ= 3600մ3/ ժամ 5. օդամղիչ արտածման Լա= 3200մ3/ժամ 6 աղմկախլացուցիչ 7 օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8 ճկուն ներդիրներ 9 թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10. ավտոմատիայի կոմպլեկտ | կ-տ | 1 | 2 |
| 3 | TROX, 2400/2400 Ներածման-արտածման սարք, Լն=2400խմ/ժամ, Լա=2400խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2)օդատաքացուցիչ ՕԴ=19 8կվտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=2400մ3/ժամ 5)օդամղիչ արտածման Լա=2400մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ | կ-տ | 1 | 2 |

| | | | | |
|----------------------------------|---|-----|---|--------|
| 4 | TROX, 5885/6140 Ներածման-արտածման սարք. Լն=5885խմ/ժամ, Լա=4860խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ Օτ=48 6կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=5885մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=4860մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ | կ-տ | 1 | 2 |
| 5 | TROX, 1820 Ներածման սարք. Լն=1820խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի վրա 2) օդատաքացուցիչ Օτ=15կՎտ 3) օդամղիչ ներածման Լն=1820մ3/ժամ 4) ձայնախլացուցիչ 5) օդի կարգավորիչ փական մուտքի վրա 6) ճկուն ներդիրներ 7) ավտոմատիկայի կոմպլեկտ | կ-տ | 1 | 2 |
| 6 | ZILON, Օդափոխիչ կանալային Լ=540խմ/ժամ P=200Պա N=0,8կՎտ | հատ | 1 | 6 ամիս |
| 7 | ZILON, Օդափոխիչ կանալային Լ=270խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ | հատ | 1 | 6 ամիս |
| 8 | ZILON, Օդափոխիչ կանալային Լ=100խմ/ժամ P=100Պա N=0,5կՎտ | հատ | 2 | 6 ամիս |
| 9 | ZILON, Օդափոխիչ կանալային Լ=325խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ | հատ | 1 | 6 ամիս |
| 10 | ZILON, Օդափոխիչ կանալային Լ=800խմ/ժամ P=220Պա N=0,8կՎտ | հատ | 1 | 6 ամիս |
| Կաթսայատան սարքավորումներ | | | | |
| 11 | ТеплосНаб Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա "Северянин" Q=120կվտ հզորությամբ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 12 | ТеплосНаб Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա "Северянин" Q=90կվտ հզորությամբ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 13 | ԴԱՅ Ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 120/250-40T մակնիշի (сдвоенный) G=3,57խմ/ժ, H=11,2մ, N=536--339վտ, n=2780---2080պտ/րոպ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 14 | ԴԱՅ Օդափոխության համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 60/250-40T մակնիշի (сдвоенный) G=4,96խմ/ժ, H=7մ, N=348---232վտ, n=2650---1520պտ/րոպ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 15 | ԴԱՅ (+3,3 նիշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,324խմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440---1260պտ/րոպ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 16 | ԴԱՅ Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=9,05խմ/ժ, H=7,5մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |
| 17 | ԴԱՅ Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=7,6խմ/ժ, H=7,6մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ կամ համարժեք | կ-տ | 1 | 1 |


| Տաք ջրի մատակարարման ներքին ցանց | | | | |
|--|--|----------|-----|--------|
| 18 | ENERGY 220 Արևային ջրատաքացուցիչ JNG-30, V=300լ, կոլեկտորի տիպը վակուումային, չափերը 2343x1560x1710մմ կամ համարժեք | կոմպլեկտ | 1 | 5 |
| Ջրահեռացման համակարգի հակասառեցման կաբելային ցանց | | | | |
| 19 | DEVI Կարգավորիչ Devireg 330 | հատ | 1 | 5 |
| 20 | DEVI Մոդուլային կոնտակտոր CTX-40, 40A | հատ | 1 | 5 |
| 21 | DEVI Մալուխ ջեռուցվող DTCE-30 L=5մ, 137վտ | հատ | 4 | 5 |
| 22 | DEVI Մալուխ ջեռուցվող DTCE-30 L=10մ, 274վտ | հատ | 16 | 5 |
| 23 | DEVI Մալուխ ջեռուցվող DTCE-30 L=14մ, 366վտ | հատ | 6 | 5 |
| 24 | DEVI Մալուխ ջեռուցվող DTCE-30 L=20մ, 576վտ | հատ | 4 | 5 |
| 25 | DEVI Մալուխ ջեռուցվող DTCE-30 L=34մ, 933վտ | հատ | 2 | 5 |
| Հրդեհի ահազանգման համակարգ | | | | |
| 26 | Կենտրոնական վահանակ Рубеж -20П | հատ | 1 | 1 |
| 27 | Ինդիկացիայի բլոկ Рубеж -БИ | հատ | 1 | 1 |
| 28 | Аргус-Спектр 911 միանալու վահանակ Тандем-2М | հատ | 1 | 1 |
| 29 | Аргус-Спектр Անխափան սնուցման սարք ИВЭПР 12v3a | հատ | 2 | 6 ամիս |
| 30 | ИСБ Рыбейж Հասցեային ծխի ազդասարք ИП 212-64 | հատ | 38 | 1 |
| 31 | ИСБ Рыбейж Հասցեային հրդեհի ձեռքի ազդարարիչ ИПР 513-11 | հատ | 8 | 1 |
| 32 | Тинко Շչակ ОПОП 124-7 | հատ | 6 | 1 |
| 33 | Рыбейж Մուտքային մոդուլ АМП-4 | հատ | 1 | 1 |
| 34 | Полисервис Հրդեհի գծային ծխի սովիչ ИПДЛ-Д-И/4Р | հատ | 4 | 1 |
| 35 | ПНС Ինտերֆեյսի փոխակերպիչ | հատ | 1 | 1 |
| Տեսահսկման համակարգ | | | | |
| 36 | Hikvision Տեսախցիկ DS-2CE56D0T-IRP, HD1080p, 2MP CMOS Sensor, 24 pcs LEDs, 20m IR, Outdoor IR Eyeball, ICR, 0 1 Lux/F1 2, 12 VDC, Smart IR, DNR, IP66, 3 6/6mm Lens կամ համարժեք | հատ | 4 | 1 |
| 37 | Hikvision Տեսախցիկ DS-2CE16D0T-IRP, HD1080p, 2MP CMOS Sensor, 24 pcs LEDs, 20m IR, Outdoor IR Bullet, ICR, 0 1 Lux/F1 2, 12 VDC, Smart IR, DNR, IP66, 3 6/6mm Lens կամ համարժեք | հատ | 10 | 1 |
| 38 | Hikvision Տեսագրող սարք DS-7116HQHI-K1, 16Turbo HD/AHD/Analog interface input, 16-ch video&1-ch audio input, 2-ch IP video input, 1 SATA interface, CH01-04 3MP @ 15fps, CH01-16.1920x1080P/4MP Lite@15 fps/ch, 4K UHD output, mini 1U case կամ համարժեք | հատ | 1 | 1 |
| 39 | Seagate Կոշտ սկավառակ 4SP Seagate® Surveillance® HDD (SV35) SATA3 up to 6 0Gb/s (for 24/7 work) կամ համարժեք | հատ | 1 | 1 |
| 40 | Hikvision Սնուցման սարք 12V20Ա մետաղական արկղով | հատ | 1 | 1 |
| 41 | Hikvision Անխափան սնուցման սարք PowerCom KIN-1500AP, UPS 1500VA կամ համարժեք | հատ | 1 | 6 ամիս |
| Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան LSԵ | | | | |
| 42 | RU- TRANSFORMATOR Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան LSԵ КТП-250 10(6) 0 4кВ | կ/տ | 1 | 3 |
| 67 կվտ դրվածքային հզորությամբ արևային ՖՎ կայան | | | | |
| 43 | ՍՈԼ ԱՐՄ ԷԼԵԲՁԻ Արևային ֆոտովոլտային համակարգ Արևային վահանակներ 335W mono կամ համարժեք | հատ | 200 | 10 |

| | | | | |
|------------------------------------|--|-----|----|----|
| 44 | GROWATT USA Փոխակերպիչի տեղադրում (ինվերտոր) 380վ, 60կվտ Growatt MAX 60KTL3LV կամ համարժեք | հատ | 1 | 5 |
| 45 | EKF Իմպուլսային գերլարումից պաշտպանող սարք 2 բևեռանի (1L+N) УЗИП | հատ | 12 | 1 |
| 46 | ЭЛЕКТРО ОМ Երկսակազնային դարձափոխիչային հաշվիչ էլեկտրոնային 2 տարիֆային 380Վ 5Ա | հատ | 1 | 1 |
| 47 | LEGRAND Հոսանքի տրանսֆորմատոր 400/5Ա | հատ | 3 | 1 |
| 48 | Schirtec S-AM շանթարգիչ սարքի տեղադրում հենասյան վրա /կամ համարժեք/ | հատ | 1 | 1 |
| Մաքրման կայանի ե/բետոնե հոր | | | | |
| 49 | Tonac-15 Մաքրման կայան | կ/տ | 1 | 15 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե»
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 կառավարական տուն 3
 «Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն»
 ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



ԿԱՊԱՆԱՌՈՒ՝

«Հիդրո» ՍՊԸ
 ք Մխիթան, Շիրվանզադե 5
 «Հայրիզնեսրանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1150008211381335
 ՀՎՀՀ 09804085
 Տնօրեն՝



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Սյունիքի մարզի Վաղատին գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների կատարման

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավոր | Քանակ | Դիվանդան արժեքը | ընդամենը |
|--|--|------------|--------|-----------------|-----------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 Համաշինարարական աշխատանքներ | | | | | |
| Հողային աշխատանքներ | | | | | |
| 1 | 11-րդ կարգի գրունտների մշակում խրամուղիներում 0.5մ3 շտեմբի տարողությամբ էքսկավատորով, կողից | խմ | 1230 | 580 | 7 3400 |
| 2 | Հետիցքի համար պահանջվող գրունտի բաժնում ավտոմեքենաների վրա էքսկավատորով | խմ | 437 | 450 | 196650 |
| 3 | Նույնի տեղափոխում 1կմ հեռավորությունից (ծամանակավոր պահուստից) | խմ | 437 | 750 | 327750 |
| 4 | Գրունտի ետիցքը բրգոցներով | խմ | 1417 | 280 | 396760 |
| 5 | Գրունտի տրվանում օգանշական ձեռքի տրվանիչով | խմ | 1417 | 400 | 566800 |
| 6 | Գրունտի ետիցքը հիմքերի ձոց ձեռքով տրվանույով | խմ | 250 | 500 | 125000 |
| Ընդամենը հողային աշխատանքներ | | | | | 2326360 |
| Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր | | | | | |
| 7 | Բետոնե նահապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B-7.5 դասի բետոնով | խմ | 49.8 | 45000 | 2241000 |
| 8 | Խամշարաբետոնե ժապավենաին հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնով | խմ | 5.8 | 45000 | 26 000 |
| 9 | Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնով | խմ | 35.2 | 45000 | 584000 |
| 10 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 287.95 | 65000 | 18716750 |
| 11 | Ամրան Փ8A240C | տն | 7.121 | 358000 | 2549318 |
| 12 | Ամրան Փ16A500C | տն | 5.572 | 355000 | 1978167 |
| 13 | Ամրան Փ18A500C | տն | 4.442 | 355000 | 1576768 |
| 14 | Ամրան Փ25A500C | տն | 0.115 | 355000 | 40896 |
| 15 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 5.1 | 65000 | 331500 |
| 16 | Ամրան Փ8A240C | տն | 0.510 | 358000 | 182580 |
| 17 | Ամրան Փ22A500C | տն | 1.742 | 355000 | 618410 |
| 18 | Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ | տն | 0.232 | 650000 | 150865 |
| 19 | Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով | խմ | 169.65 | 65000 | 11027250 |
| 20 | Ամրան Փ6, 8A240C | տն | 1.452 | 358000 | 5 9852 |
| 21 | Ամրան Փ10A500C | տն | 2.599 | 355000 | 922645 |
| 22 | Ամրան Փ12A500C | տն | 8.407 | 355000 | 2984450 |
| 23 | Ամրան Փ16A500C | տն | 0.431 | 355000 | 152863 |
| 24 | Ամրան Փ22A500C | տն | 1.325 | 355000 | 470517 |
| 25 | Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ | տն | 0.238 | 650000 | 154375 |
| Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր | | | | | 46463205 |
| Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր | | | | | |
| 26 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 59.5 | 75000 | 4462500 |
